«ՀԵՏԱՔՆՆՈՂ ԼՐԱԳՐՈՂՆԵՐ» հասարակական կազմակերպություն
Երեւան, Փ. Բուզանդի 1/3, 8-րդ հարկ, հեռ: (37410) 580219, 563363, ֆաքս: (37410) 581102, E-mail: info@hetq.am, hetq@hetq.am, URL : www.hetq.am

---

03.02.2020թ.

ՀՀ Լոռու մարզպետ
Պարոն Անդրեյ Ղուկասյանին

«Հետաքննող լրագրողներ» ՀԿ-ի
«Հետք» թերթի լրագրող
Գրիշա Բալասանյանից
Հեռ. 093-82-26-80

Հարգելի պարոն *Ղուկասյան,*

«Հետք» էլեկտրոնային թերթը հոդված է պատրաստում: «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի 6, 9, 12-րդ հոդվածների հիմքով խնդրում եմ տրամադրել տեղեկություններ հետևյալի մասին,

1. Մարզում 2018-2020թթ. քանի՞ գյուղացիական տնտեսություն է օգտվել գյուղատնտեսական վարկերից, ինչ գումարի չափով և պայմաններով: Տեղեկատվությունը տրամադրել առանձին-առանձին՝ ըստ տարիների և համայնքների:

2. Ո՞ր բանկերը կամ վարկային կազմակերպություններն են մարզի բնակիչներին տրամադրում գյուղատնտեսական վարկեր և ի՞նչ պայմաններով:

3. 2018-2020թթ. մարզի ո՞ր համայնքներից են օգտվել պետության կողմից արտոնյալ պայմաններով տրամադրված գյուղատնտեսական վարկերից և ինչ պայմաններով: Տեղեկատվությունը տրամադրել առանձին-առանձին՝ ըստ տարիների, համայնքների, յուրաքանչյուր համայնքի վարկառու բնակչության թվի:

4. 2018-2020թթ. ինչպիսի՞ն է եղել վարկառու գյուղացիների վճարունակության վիճակը՝ նախորդ տարիների հետ համեմատ:

5. 2018-2020թթ. քանի վարկառու գյուղացի է կորցրել գույքը՝ վարկը մարել չկարողանալու պատճառով:

6. Տրամադրել մարզի ամենաշատ վարկառու ունեցող 5 համայնքների ցանկը:

Կանխավ շնորհակալություն

Դիմող՝ Գ. Բալասանյան